

Հրատարակութիւն Հնչակեան Առաջութեան

Ֆալովրդական Գրագարան

Գրքոյն առաջին

Ը Ե Ր Ի Ն Ա Լ Ի

Ե Կ Ե Ր Ս Պ Ա Վ Ե Ա Գ Ա

Յ Ե Վ Ա Փ Ո Խ Ա Ա Ա Բ Ի Ց

ՀԵՂ.

Ըստը Ա Ը Մ Ի Կ Ի

1895

Հ Հ Ա Զ Ա Խ Ա Տ Ա Ր Ա Խ Ա Ն

Լ Օ Ւ Թ Օ Ն

Mr. Առաքործութեան
1916

ԳԻՒԻՆ ԱԼԻ

ԵՒ ԻՐ ՍՊԱՆՈՊ,

238/5

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Ան Շովի հարաւային ափերի վրայ ձգվում
է լեռների մի երկար շղթայ, որ սկսելով Տրապի-
զոնի մօտ Լազիստանի կողմերից, տարածվում է
դէպի արեւմուտք և մօտենում ԲօսՓօրի հարա-
ւային եղերքին: Ուղտի կարաւանների նման իրար
ետեւից շարված լեռներով՝ նա մէկ ցածանում է
և աչագին անգունգներ, խոր կիրճեր կազմում,
մէկ ելքարձրանում է և իր անտառուտ գլուխը
ուղցնում ձիւնային սառ մժնոլորտում: Սագա-

րիա, Գըղըւ-Ըօմսդ, Եէշիլ-Ըօմսդ գետերը, մի-
անալով ուրիշ շատ գետակների հետ, ձեղ-
քել են այդ լեռնաշղթայի սեպաձեւ, քարուտ
կուրծքը և դարերի ընթացքում իրանց համար
բաց են արել ոլոր-մոլոր ճամբաներ: Պօնտոսի
այդ նշանաւոր զլթան նահապետական դարե-
րից սկսած մինչեւ այս օրս էլ իր ծոցում պա-
հել է քաջ հերոսների ցեղեր, որոնք մինչեւ վերջ
անընկելի են մնացել. բոնապետական անարդ
լուծից: Անտառը հիւրասիրել է իր քաջ զաւակ-
ներին, տվել է իր բնական անմատչելի պատսպա-
րանը, մնուցել է նրանց իր երեներով (վայրի որսի
կենդանիներ), իր պտուղներով և զովացրել է նր-
անց այրած սրտերն իր սառն աղբիւրների վ ճիռ
ջրերով:

188* ին ամբողջ թանիկի սանջակը սարսափի
մէջ էր: Դեռ նոր էր ազատվել նա Ղարա-Զօ-
ջուկ յոյն աւազակապետի ասպատակութիւննե-
րից, երբ երեւան եկաւ աւելի ահարկու մի հրո-
սակ, հինգ ընկերներով, որոնցից շատերը լազ և
խափանեց գլխաւոր ճամբաների անցքերը: Ճամ-

բորդները սարսափից գողում էին: Վաճառակա-
նութիւնը մեծ հարուած էր ստացել Շիրին Ա-
լին — այդ էր նշանաւոր ասպատակի անունը —
կտրել էր Փոքր Հայքի ապրանքների փոխադրու-
թեան միակ գուռը եղող Ճանապարհը: Նա մէկ
երեւում էր Ղարա-Դաղի խոր, անտառուտ ձորե-
րում, մէկ էլ ձայն էր տալիս Զագալը բարձր
լեռան խիտ մացառներով ծածկված գագաթից:
Կառավարութեան բոլոր ձեռնարկները, ծախու-
րը պարապ տեղն էին վատնվում: Շիրին Ալին
անձեռնմխելի էր գարձել սպանել էր զինոր-
ներ, ոստիկաններ և լքցրել էր այդ պաշտօն-
ներն ունեցող բոլորի սիրան աչ ու սարսափով:
Թիւրք կառավարութիւնը խոստացել էր մեծ
պարգեւ Շիրին-Ալին սպանողին: Կազմվել էին
կամաւորների խմբեր և հալածել նրան, բայց
միշտ վեասվել վիրաւորվել, սպանվել էին և
յուսահատ իրանց տեղերը գարձել Շիրին-Ա-
լիի գնդակը երբէք վրիպել չը գիտէր. Նա վայր
էր գցում հեռաւոր կէտի վրայ գրված հազիւ
նշանելի հաւկիթն անգամ: Նրա հալածողները
քաշվելով ասպարէզից, ամենով ջանիկը բաց էին
ժողել նրա առջեւ, այնպէս որ այդ համարձակ

աւազակի յանդգնութիւնը ծայրայեղութե ան էր
հասել: Գուրշոնուի, Գաբու-Գաեաի և էլ Էյրի
Գէրէի ամբողջ հայաբնակ գիւղերը մատնվալ էին
մի ծանր զրութեան. ինչ որ մնացել էր պեաական
աւազակների կողոպտածից, այն էլ յարձկում-
ներով կողոպտել էր Շիրին-Նլին:

Գիւղերում գեռ պահպանվել է նահապետա-
կան հին զրութիւնը. ցերեկւայ չարաչար աշխա-
տութիւնից յոգնած՝ նրանք ժողովվում են գիւղի
մեծի, քահեայի կամ ամենից հարստի տունը,
գեղջկական պարզ խելքով խօսում են օրւայ
խնդիրների վրայ, քննագատում և միշտ միեւ-
նոյն եզրակացութեան գալիս: — ունրկնուց է,
օրդի՞ւ, — ասում են ամենածերերը. — ովախտը
(ժամանակ) գիշացեր է, մարդիկ սատանայացեր են,
անոնք մոռացեր են իրենց Ստեղծողին, նա էլ
բարկացած կը պատժէ մեզ...” Խօր ախ-էր են
քաշում և մէկ ինչ-որ անորոշ աղօթք մըմմր-
թալով իրանց քթի տակ, խաչակնվում են եւ
խօսքերով սատանային հալածում:

* * *

Գչորդնան սկիզբներն էր: Բնութիւնն արթնա-
ցել էր իր խոր քնից: Անտառի վլթարի ծա-
ռերը հագել էին ամենսփայլուն կան ոչ զգեստ:
Նրանց մէջ աեղածել վայրի պտղատու ծառերը
ծաղկել էին իւրաքանչիւրն իրան յատուկ գոյ-
նով և միօրինսկ կանչչութեան տվել էին ա-
մենսհրաշովի մի տեսաբան. նրանք գրաւում
էին անցորդներին: Հիւսիսի թեթեւ քամին շո-
յում էր նրանց, ամենազդոյշ կերպով շարժում
նրանց կանաչ փայլուն գիսակները և կար-
ծես կատակներ անում:

Օաղկազարդի կիրակին էր: ոխ ոչ ի մէջ
(եկեղեցի) քարոզ պէտք է խօսէր տեղի քահանայ,
երեք օխտ բռնօթի քիթը քաշող Տ-Դաւիթը.
խոկ գիւղացիները պէտք է ժողով կազմէին խոր-
չելու իրանց ներկայ վիճակի վրայ: Անտառի
խորքերում, միմեանցից շատ հեռու-հեռու ցը-
ված տներից գուրս էին գալիս գունատ, գալ-
կահար գէմքեր, տղամարդ, կին և շտապում էին
իս աչ որը լցվել էր երկու սեռի սառւար բազ-
մութեամբ: Տէր Դաւիթը ոգեւորված քարոզ էր

տալիս. այդ հին երկաթագործը աշխատում էր իր խօսքերին մի աստուածաբանական ձեւ տալ. և ինչ հին ու նոր բառեր որ գտնում էր՝ գուրս էր շպրտում եւ աղերսալի խօսքերով ժողովրդին հրաւիրում երկիւղածութեան և մեղայի: ո՛՛ իրին՝ Ալին, ասում էր նա, մեր մեղացը պառզն է, պէտք է որ քաղենք:” և իր խօսքերին աւելի հաստատութիւն տալու համար, իբր խոշոր փաստ, մէջ էր բերում այս ինչ ու այն ինչ պառաւի աննպաստ երազները: “Նո դիմում էր Աստծուն իրան յանձնած հօտին՝ ուժ օր հսկում կատարելու, մատաղներ մօրթելու և իրանց կրօնուուրին վճարելու տուրք երը: “Նարեկից հառուածներ էր կարգում, թարգմանում և նեղը մնացած ժամանակ մօրուքն էր բորում և հազում: Ժողովուրզը լուս երկիւղածութեամբ լրսում էր նրան և ամեն անդամ, երբ Քրիստոսի անունն էր տրվում, խաչակներում էր և ամենքը միասին աշագին աղմկով մեղայ:” էին գոչում:

Եկեղեցին աւարտել էր: Ժողովուրզը ծաղկազարդ գետանին վրայ նստուած, զիւղական սովորութեան համեմատ ուտում էր բերած նախաձաշը: Նրանք թէ ուտում էին, թէ խօսում: Նը-

րանց խօսքն առհասարակ օրւայ հերոսի մասին էր. ամենքի բերանից Շիրին-Ալի անունն էր լրսվում, թէ ինչպէս նա պառկեցրել էր Պօղ (շեկ) Մարգարի գոմէշին, նրանից ողջ ողջ պոկել էր մի զոյգ տրեխի համար կաշի և մի քիչ էլ միս ու հեռացելը նրանք միիթարում էին Պօղ-Մարգարին և նրա կնկան, որ լոց էր լինում և անիծում այն ձեռքը, որն անխղճաբար զօկել էր իր հինգ պստիկներին մի քիչ կաթ ուտելուց սեւ միսիրի (եգիպտացորեն) հացի հետ: Գիւղի վարժապետ Թաթոսը պտտում էր դէս ու դէն եւ լուռ ականջ էր դնում նրանց հառաջանքներին, գանգատներին: Նա նշմարեց Կապետին (Կարապետ), որը նոյնպէս տիսուր ման էր գալիս: Թաթոսը մօտեցաւ նրան և ցածր ձայնով հարցրեց.

— Կապետ, ինչպէս էր Տէր Դաւիթի քարոզը:

— Աստանան տանի էն տեսակ քարոզին, ասաց Կապետը գժգոհ ձայնով և զլուխը շարժելով:

— ամեն կողմ աւազակներով լիքն է. հիբմէթը (կառավարութիւն) մեղ կողոպտում է իր հաղար տեսակ վերգիներով (տուրքերով), բէկն ուտելիք չէ թողել մեղ մօտ, տարել է մեր կթանները (այն անասունները, որ կաթ են տալիս) եւ

կես գինով ծախել: Եւ Շիրին-Ալին ահա ութինն ամիս է, որ բոլորավին մերկացրեց մեզ: Սլքանք, տէրանելն (տէր հայր) էլ ուզում են խաչի (եկեղեցու) մէջ կողոպտել. ախըր էսպէս ապրել կըլի. լաւ էր որ մեռնէինք:

— Ինչով են նրանք մեղաւոր, և սպետ, ասաց Թաթոսը. հէնց մենք ենք, որ կողոպտում ենք մեզ:

— Ինչպէս կարող ենք կողոպտել ինքներս մեզ ասաց կապետը թերահաւոտ շեշտով. ախըր գիտաժառնութեան էլ չի անում էդ բանը:

— Ռիշդն եմ ասում, կապետ, հառաչելով յարեց Թաթոսը. աես, թէ ինչ եմ ուզում ասել երբ ասում եմ մենք մեր թշնամին:

Թաթոսը քայլ արաւ դէպի մի կողմէ առաջացաւ կապետը հետեւեց նրան. երկուսն էլ լուռ գընալով, առանձնացան անտառում մի հսկայ շինարի ծառի ստուերի տակ: Թաթոսը ուսում առած մարդ էր. նա աւարտել էր կօլէջը հետարբրվել էր մանաւանդ գիւղացիների կեանքով, որի ճըշմարիտ զոււակն էր եւ ինքը: Կա անսում էր նրանց աստիճանաբար անկումը, նրանց տնտեսական յոտի կացութիւնն ու քայլայվելլ:

Կա վառեց մի ծիախոտ, դուրս փշեց նրա

կծու ծուխը, դուրս թաղնելով նրա հետ և մի խոր հառաչանք. . .

— Ջենս, թէ ինչումն է կայանում մեր թշնամութիւնը հէնց մեր գէմ, — սկսաւ խօսել թաթոսը. — Հէնց էն օրից, երբ մեր պապերը սկըսել են գլուխ տալ բէկերի, իշխանների, թագաւորների, գրանք էլ սկսել են նրանցից կամաց կամաց դուրս քաշել ազատութեան զգացումը և գարերի ընթաց բռում, ինչպէս շատ անգամ ասել եմ քեզը անամացրել նրանց: Դրա կենդանի օրինակն ունենք այսօր մեր առջեւ: Մեր բէկը, որին դու աւելի լաւ ես ճանաչում, քան ես, նա իր անդթութիւններով յայտնի է և նրա մասին շատ անգամ դու ինքդ ես պատմել ինձ: Դեռ մեր մտքից չէ դուրս եկել զօչաղ Մելքոնի սըրտաճմիկ գէպքը, որը յանդգնել էր բէկի դէմ մի քիչ համարձակ խօսել, պարզելով գիւղացիի ընկած դրութիւնը եւ գթութիւն էր խնդրել բէկից: Քեզ և ամենքիս էլ լաւ յայտնի է, թէ անգութ բէկն ինչ բաղդի արժանացրեց նրան. Կրակից կարմրած մէկ երկաթի կտոր բերել տալով ոստիկաններին, բռնի լիզել տվեց նրան: Պօչաղ Մելքոնն էն օրից մինչեւ էս օր խիստ դան-

դաղ կերպով և թոթով է խօսում:

Դօչաղ Մելքօնի դէպքը լսելիս՝ մի սարսուռ յանկարծ ցնցեց կապետի ամբողջ ժարմինը. նա անգիտակցաբար ձեռ քըտարաւ ճակատին, կարծես այդ վայրկետանին նրա վրայ էին գործադրում այդ վայրենի գործողութիւնը: Նրա ճակատից քըրտինքի խոշոր կաթիլներ վայր էին գլորվում:

Վարունակենք մեր խօսքը, — ասաց թաթոսը նշմարելով նրա վրտովված դրութիւնը և հանգըստացնել աշխատելով նրան: — Այդ բոնապետները ստրկութիւնը բնաւորութիւն են դարձրել մեր հայրերի մէջ և այդ ստրկութեան ոգին նրանցից ժառանգել ենք մենք: Մեզ կողոպտում են ամեն կողմից. մեզ կողոպտում է սուլթանն իր անհատնում տուրքերով, մեզ կողոպտում է բէկը, մեզ կողոպտում է միւլթէզիմը (կապալառու), մեզ կողոպտում են ամենաբարձր պաշտօնեաներից սկսած մինչեւ մեր գեղի գղիք քէօռ Ակօհ տղայ Պէտօն, մեզ կողոպտում է և Շիրին-Ալին: Սրանք իրանց համար զէնք են ունեցել բրոնութիւնը, սարսափը, բանտը, աքսօրը, մինչեւ իսկ մահը: Մեզ կողոպտում է նաև մեր կղերական դասը — շեշտելով՝ վերջացրեց թաթոսն իր խօս-

քը, ուղիղ կապետի դէմքին նայելով:

Կապետը կատաղութիւնից կրծտում էր իր ակռաները, այնպէս որ իր դէմքի բոլոր մկանունքները շարժվում էին:

— Եթէ ինձ թողնէին, ասաց նա, յանկարծ ուաքի կանգնելով եւ կատաղութիւնից իր շրթները կրծոտելով — հէնց առաջին քայլին կոչուչացնէի այդ անպիտաններին: Զեր անցեալ օրւան խօսածները շարունակեց նա, իրաւ որ շատ ծշմարիտ եմ գտնում: Գուք ասում էիք, բանապետները ստրկացնում են ժողովրդին, իսկ կղերականներն ամրապնդում եւ կապիկում են այդ իեղձերին ամուր շղթաներում Ան, արիւն ծծոլ ջղեկներ, գոռաց կապետը, իր բոունցքը դէպի առաջ մղելով. . . .

Թաթոսը տեմնելով իր խօսքերի աղդեցութիւնը, մի ներքին բաւականութիւն զգաց եւ այդ ցոյց չը տալով բաշեց կապետի թեւից ու նստեցրեց տաքըլսի երիտասարդին իր մօտ եւ սկսեց շարունակել աւելի ոգեւորված կերպով:

— Վանքերի և եկեղեցիների մէջ որջացած այդ հոգեւորական աւազակներն, աւելի սարսափելի և աւելի վտանգաւոր են դարձել հէնց այն

պատճառով, որ նրանք իրանց համար ընտրել են
աւելի վեասակար մի զէնք. — մեր կոյր նախա-
պաշարումը և մեր տգիտութիւնը: Մենք երբէք
էլ չենք մտածել դրանցից, այդ օտարակերնե-
րից, ազատվելու միջոցների վրայ: Մենք, ժողո-
վրդիս մեծամասնութիւնը, կերակրում ենք, հագ-
ցընում ենք մէկ ամենաշնչին փոքրամասնութեան.
զարդարում ենք սէրայները, զարդարում ենք սուլ-
թանի հարէմ հիւրիներին մեր բսակով. նրանց
ամբարները լցնում մեր ձակատի քրամինքի արդիւ-
քով և մեզ համար կուռքեր, աստուածներ ենք
պատրաստում, նրանց գլուխ ենք տալիս, նրանց
ոտքի փոշիներն ենք լիցում: Իսկ նրանք արհա-
մարհելով մեզ, կոշտ գիւղացիներիս, կոխոտում
են մեզ իրանց երջանկացնողի վրայ նայում են ի-
բըր մի գարշելի սողունի վրայ: Կրանք վախեցը-
նում են մեզ բանտով, սրով մահով իսկ մեր հո-
գեւորականները մեզ վախեցնում են Աստուածը
բանտով գժոխքով սատանաների պողերով (եղ-
ջիւր) և յաւիտենական մահով: Այդ ամենը կա-
տարվում են մի յայտնի նախագծով: Նրանք ու-
զում են խեղել մեղանում այն ամեն զգացում-
ները, որ կարող կը չինեն արթնացնել մեր մէջ

ինքնաճանաչութեան ոգին: Նրանք լաւ գիտեն,
թէ ինչ ահագին անկում եւ ինչ մեծ թշուա-
սութիւն կը սպառնայ իրանց, եթէ գիւղացիները
չը լինեն իրանց հիմակւայ վիճակում, և հենց այդ
պատճառով էլ նրանք միշտ թշնամիներ են այն
մարդկանց, որնք բարեկամ են եղել ժողովրդին.
օրինակ, նրանք միշտ հալածում են վարժապետ-
ներին և ատելով ատում են զպրոցականներին:
Ինչո՞ւ: Որովհետեւ այս վերջիններս իրանց բա-
րոյական պարտքն են համարում համակրել ժողո-
վրդին. նրան հասկացնելիք անկման պատճառները
կարեկցում են գիւղացուն և նրան այդ անտանելի
վիճակից ազատելու համար միջոցներ են խորհում:

— Անք տանում ենք ամեն բան, շարունակեց
թաթուը, քիչ աւելի բարձրացնելովիր ձայնը, մեր-
կացնում են մեզ մենք բողոքում ենք Աստուածն,
որ պատճէ նրանց. բոնաբարում, անպատռում
են մեր աղջիկներին, մեր հարսերին, իսկ մենք լուռ-
ու մունջ արտասլում ենք և գալոց աշխարհի
գատասանին ենք յանձնում անխիղճ յանցաւք-
րին: Մենք մոռանում ենք մեր իսկական ոյժը,
մեր բազուկները, և երբէք էլ չենք մտածում
մէկ օր նրանց գործածեր: Մենք զէնք ենք տալիս

մեր թշնամիի ձեռքը և յետոյ աղազում ենք, որ
նա մեզ չը խփէ: Այդ պայմանի տակ ի՞նչ յան-
ցանք ունի մեր թշնամին. նա ուրիշ բան չէ տ-
նում, եթէ ոչ կուշտ-կուշտ ծիծաղում մեր տըխ-
մարութեան վրայ: Մենք չենք կորող մեղադրել
նրան և իրաւունք էլ չունենք. մենք իսկապէս
պէտք է մեղադրենք մեր անձը, որ առանց հե-
տեւանքը մտածելու զէնք ենք տալիս մեր թշնա-
մին: Ասա, կապետ, ով է հիմա մեր բուն թըշ-
նամին. մեր հակառակօրդը, որ մեր զէնքով մեզ
սպանում է, ոչնչացնում և մեր արիւնն է ծծում,
թէ մէնք, որ յօժար կերպով նրան տվինք այդ
զէնքը նրա համար բացինք մեր երակները, մեր
քսակը և նրա առջեւ գլուխ ծոեցինք ամեն պա-
րագաներում: Շիրին-Ալին ասպատակում է մեր
երկրում. նա օր ցերեկով մեր գոմէշներից ողջ-ողջ
քերթում է մի զցոյ տրեխի կաշի և մի քիչ էլ
միս կտրելով հեռանում: Նա կրակ է տալիս
մեր կալերը, մեր մարագները: Խակ մենք ի՞նչ ենք
անում: Լուռ ու մօւնջ գիտում ենք աժդ ամենը,
այս ու այն անձին ենք դիմում, հիբմէթին գան-
գատ տալիս, որի պատուէրով ու հաշով հենց
դուրս է եկել Շիրին-Ալին: Մենք, երբէք չենք

աշխատում մեր ձեռքով վճռել մեր դատը...
Կապետը լուր լսում էր. նրա երիտասարդա-
կան արիւնը եռում էր, նրանում կատարվում
էր մէկ ինչ-որ ներքին յեղաջրջութիւն: Ապրե-
լով ազատ անտառների խորքում, գիւղական ա-
մենահամեստ կեանքով նրա ուղեղը չէր փտել,
նրա միտքը բաց էր և ամեն բանի ընդունակ. նա
հիմա թաթոսի վրայ նայում էր բոլորովին ուրիշ
աչքով: Նա այդ նիշար երիտասարդի նւազ աչ-
քերում տեսնում էր մէկ աւելի փայլուն լոյս, որը
կարողացել էր թափանցել գիւղական կեանքի ա-
մենամութ խորշերը. նա մէկ-մէկ կշռում էր նրա
խօսքերը և իրաւունք էր տալիս: Նա առաջուց էլ
լսել էր շատ բաներ իրանց, գիւղացիների, նկատ-
մամբ, բայց այնքան ուշադրութիւն չէր գարձրել
որքան այսօր... .

Եւ կապետը ծխում էր իր նոր վառած ծը-
խախոտը, ագահութեամբ կուլ տալիս նրա ծու-
խը, կարծես խեղդել էր ուղում այն հոգեկան
շափազանց յուղումը, որ առաջացել էր թա-
թոսի խօսքերից:

Նրանց մօտեցաւ Մինասը, ո Ողորմի Աստուածա-
սաց և նստեց թաթոսի մօտ: Մինասը գեղե-

ցիկ մի տղամարդ էր, հազիւ 26 տարեկան, միջահասակ. իր սեւ սամի նման աղեղնաձեւ յօնքերի տակ փայլում էին երկու խոհուն սեւ աչքեր, որոնք միեւնոյն ժամանակ արտայատում էին վայրենի քաջութիւն ու արհամարհանք:

Նա գիւղի մէջ առաջին երիտասարդն էր, որ շատանգամ յանդգնել էր մերժել աւազակների ծանր պահաջները: Նա մի ժամանակ ոստիկան զինոր էր գրվել քանիկի սանջակում. հիմա թողնելով այդ անպատիւ պաշտօնը, աշխատում էր երկրագործութեամբ:

Նա լաւ ճանաչում էր թաթոսին. սրա խոռարհ բնաւորութիւնը, քաղցր խօսքերը և դէպի գիւղացիներն ունեցած սէլն այն աստիճան էին գրաւել Մինասի օիրալը, որ նա հիմնում էր, իր բոլոր հոգով միրում, պաշտում էր վարժապետին: Նրանք շատ անգամ առանձնանում էին մի ապառաժի կամ ծառերի տառերի տակ. թաթոսը խօսում էր ոգեւորված կերպով նրա միակ խօսակցութեան նիւթը լինում էր գիւղացին և նրա դրութիւնը:

— Ո՞նք պէտք է աղատվենք — Մինաս, առում էր նա մէկ օր, — այս անտանելի դրութիւ-

նից: Մեր անային ներքին կեանքը քանդվել է. մեղ համար և առ հասարակ Թիւրքիայի գիւղական ժողովով համար սպառնում է անկում: Այդ անկում արգէն կամաց կայաց զգացվում է. այժմ մենք ընդհանրապէս խորհում ենք միայն մեր ներկայ վիճակի վրայ, սակայն մենք ունենք և զաւակներ, որոնք պէտք է կազմեն ապագայ սերունդը. մենք մեր անտարբերութեամբ ուրիշ բան չենք կարող կոտակել նրանց, եթէ ոչ ծայրայեղ թշուառութիւն, որի մէջ խրված ենք մենք ինքներս այսօր: Մեր մէջ չը կոյ բարոյական տուկունութիւն. բոնութիւնը գարերի ընթացքում մեր մէջ մտցրել է անասնային հպատակութիւն և ստորաքարչ ստրկութիւն. մենք կորցրել ենք և մեր մարդկային պատիւը. անբարոյականութիւնըն աղատ համարձակ մմում է մեր սեմբց, անպատում է մեր ընտանեկան յարկը, իսկ մենք լուռ ու մունջ՝ քարէ արձանների պէս դիտում ենք նրան և ոչինչ էլ չենք զգում: Պէտք է փրկել մեր պատիւը, պէտք է փրկել մեր ընտանեկան յարկը, պէտք է ամոքել մեր տնտեսական ու կենսական ցաւերը, պէտք է փրկել և ապագայ սերունդը: Այս մեծ փրկագործու-

238/15

թիւնը պահանջում է եւ մեծ զօհողութիւն։ Մեր արիւնը միայն պէտք է մաքրէ մեր անցեալի կեղար և այդ արեան ճանապարհով մենք պէտք է հասնենք մեր նպատակին. . . .

Մինասը լուռ ականջ էր դնում, գիտում էր նրա նուաղ աչքերը, լափում նրա ամեն-մի խօսքը. . . .

Այսօր աեսնելով կապետին և Թաթոսին միասին, նա մօտեցաւ նրանց մէկ ինչ-որ աւետիս տալու. նրա դէմքի վրայ փայլում էր վերին աստիճանի ուրախութիւն և վթէժինդրութեան հաճոյք։

— Գիտէ՞ք ինչ է եղել ասոց Մինասը. Շիրին-Ալին սպանել է շավուշն. ձիաւորներն արդէն հետեւակների հետ հալածում են նրան։ Իւզ-Բաշի չէրբէզ Մուսան զէնք է ուղարկել գիւղացիներին, որ իրանք էլ հալածեն աւազակին։ Ես արդէն վերցրել եմ այդ զէնքերից մէկը. միւսները վերցրել են մի քանի երիտասարդներ, մէկ հատը միայն պարապ է մնացել. . . . Մեզ հետ պէտք է միանայ Մօլա-Հասանն իր մարդիկներով։

— Անացած զէնքն էլ ինձ համար կը վեր-

ցընէք, ասաց կապետը, իր խորհրդածութիւններից ուշքի գալով և ուրախութեամբ վեր թըռչելով։ Մինչեւ որ թիւրք հէքիմէթի քթին չի խփեն, նա չի ուղենալ զարթնել իր բնից, աւելացրեց նա. — ահա ամբողջ ինն ամիս է, որ այդ չարագործը գիւղացիների գլխին զալմաղալ է հանում, բայց հէքմէթը իր տեղիցն էլ չէր շարժվում. հէնց որ նա սպանեց չաւուշին, սրա միտքն է ընկել թէ լեռը էզգըյա (աւազակ) կայ... — Ի՞սկ ինչ էլ լինի, նախ՝ պէտք է ջնջել այդ պստիկ բռնապետին — վրայ բերաւ Թաթոսը, — որպէս զի յետոյ մեզ համար գործ բացվէ մեծ բռնապետների դէմ. . . .

* * *

Չարշամբայից դէպի հարաւ, չորս ժամ հեռաւորութեան վրայ, Եշիլ-Ըրմաքի արեւմտեան եզերքի ցից զարիկերում, իր այս ու այն կողմ ցրած ցանցառ աներով բարձրանում է Գափուգաեա գիւղը։ Բնութիւնը նրան շրջապատել է բնական, անմատչելի պարսպով. ապառաժների մի երկար շարք, գետի ափից սկսելով բարձրանում

է և կիսաշրջանակ կ սպմբլով մեկ աննշան գուգաւոր, անտառուաւ հովուում փակուում է գիւղը: Գետն իր խորութեամբ կատարուում է հին բերդի խրամատի պաշտօնը: Հարաւային կողմից մի խորը ձոր զատում է նրան թէքվուրի գիւղերից: Գիւղի դիրքը երթալով բարձրանուում է գետի արեւմուտք և համնելով ահագին բարձրութեան, ներկայացնուում է մի վիթխարի, հրէշային կմախք, որի կողերի սրածայր ոսկորները դուրս են ցըցվում կոնաձեւ բլբակի դագաթից: Նրա վրայ մագլցելով բարձրացել են կաղնիի հսկայ դարաւոր ծառեր և իրանց արմատներով ճանկելով կողի ոսկորների բացվածները, կազմել են անթափանցելի անտառ: Միակ անցքը, որ տալիս է նա ճամբորդներին, կազմուում է մի շատ նեղ կիրճ, որը երթալով անզգալի կերպով սեղմուում է և առնում մի կոշտ ու կոպիտ կերպով շինված դրան սեմերի ձեւ: Այդ նեղ անցքի անունով գիւղը կոչվում է գափու գափա:

Անան քամիները փչում էին: Անընդհատ շվալով, նրանք զարնուում էին քանիկի անտառների հսկայ ծառերին եւ նրանցից խլելով իրանց դալարագեղ զարդը, անկանոն կերպով սփուում

էին չորս կողմ: Քէսթէնէ-Կէսիշին հարաւային խոր ձորից բարձր սնում էր մի զինված խումբ, բաղկացած հինգ հոգուց, բոլորն էլ հագած լազի զգեստ, որ տալիս էր նրանց մի վայելուչ ձև: Իրանց բաշլցների մետաքսուպատ ծայրերն աղոստ ընկել էին կարտուշներով (փամփուշտ) ծածկված ուսերի վրայ եւ նրանց բայլերի արագութեան համապատասխան ել եւ էջ էին անում: Նուանք ունեին ոռուական բերդան հրացաններ, աջ ձեռքով բունած ունեին նրա բլբակի տակից, իսկ ձախ ձեռքով նրա փողից եւ բերանը հօրիզոնական ձեռով ուղղել էին դէպի առաջ: Նրանք շուպում էին, անհամբեր գէմբով ու անձ սին: Վայրի կաշաղակները (սագսաղանները) նրանց քայլերի խըրտուկից վախեցած՝ կու-կուա՛ ձայներով այս ու այն կողմ էին թռչոտում: Ճիրին, Ալին ամենայն զգուշութեամբ առաջնորդում էր իր խմբին: Նրանք գնում էին գափուգաեա և արդէն մօտեցել էին բլիի ցից գագաթին, երբ խորհրդաւոր մի շլոց իսկոյն գամեց նրանց իրանց աեղը: Տասներկու հրացանների փողերից միանգամբ գուրս թռուն գընդակները եւ վժժալով անցան խմբի գլխի վրա-

յով, ոչ մէկին չը խփելով։ Աւազակներն իսկոյն նախատեսելով այդ բանը, արգեն փոփել էին գետնի վրայ եւ գլորվելով, իւրաքանչիւրն իւրան համար գտել էր վյրկենական պատսպարան։ Այսպէս անցան բռպէներ, բայց ոչ ոք չէր երեւում։ Հրացանների աղմկալից արձագանքը դեռ հաղիւ էր սպառնական կերպով լոել լեռների ապառաժուտ կողերում, երբ Շիրին-Ալին մրթմրթաց զսպված կատաղութեամբ։

— Գետավորն է անպատճառ։ Հենց այսօր պէտք է նրա հետ վերջացնենք մեր հաշիւը . . . նո այլ ևս գուրս է եկել իր շապկից։ Տեսնենք թէ ինչպէս կը լինի Շիրին-Ալիի անցքը կարել համարձակողի վախճանը։ Խիստ ցածր ձայնով նա հրամայում էր, որ գամզած մնան զետնին։ Գիւղի անցքի հարաւային եղերքում, ժայռերի գլխին բարձրացած տան ծակերից Մոլլա-Հասննն իր վեց լնկերներով դիտում էր աւազակների շորժումը։ Նրանց զիրքը բայց մացառները արգելում էին նրան։ Նրա ընկերներից մի թիւրք պնդում էր, թէ նրանք մեռած էին եւ փոքրիկ պատուհանից հաղիւ գուրս էր հանել իր ճակատը, երբ յանկարծ բէրդանի գնդակը տեղն ու տեղը գը-

լորեց նրան։

Աւազակների գիրքն այնքան նպաստաւոր չէր իրանց համար։ Հերոսական ճորպիկ շարժվածքները, որ յատուկ է հետիոտն անտառի աւազակին, առժամանակ ծածկել էր նրանց իրանց հակառակորդների աչքից։ Մինասը, որ ամրացել էր ժայռերի ծոցում, թզուկ մացառների միջից նըկատեց մի բաշլըսի ծայր եւ երեւակայելով թէ ինչ ուղղութեամբ կարող էր կենալ նրա կրողը, քաշեց բլգակը։ Յանկարծ լսվեցաւ մի հսկայի աչուելի մոռչիւնը և սախ, գեավուրացան հոգոցի աղաղակի հետ վերջացաւ Շիրին-Ալիի կեանքը . . .

Ապաետը նշարեց փախստական աւազակներից մէկին։ Նրա գնդակը մտաւ փախչողի մէջքը եւ գորս պրծնելով կրծքից, գետինը փոեց նրան . . . Մնացածները թողնելով իրանց պետի եւ լնկերի գիւղներն, անհետացան։ Կառավարութիւնն իմանուզով եղելութիւնը, անմիջապէս գրաւեց աւազակների զէնքերը երկու սպանվածների գիւղները գիւղական փայտէ սահնակների վրայ բեռցած՝ հեռացրեց գիւղից։

Լեռնային թիւքը, լող, չէրքէղ աւազակ-ների բցնը պէտք է փնտուել նոյն իսկ թիւքը կառավարութեան շրջանակում։ Այդ պետական աւազակներն իրանց հաշով գինելով վայրագ հերոսներին, ուղարկում են նրանց այս ու այն կողմ եւ ամեն աննպաստ ու վտանգաւոր հանգամանքներում օգնում են նրանց, աղատում բանտից, շղթաներից եւ նորից զրկում իրանց արհեստի։ Շիթին-Ալին ունէր իր թեկնածուն. Բին-Բաշին էլ նրա հզօր պաշտպանն էր։ Լսելով իր հերոսի մահը եւ իր լեռնային եկամուտ ների դադարումը, նա սկսաւ ոխակալ սրտով ծածուկ կերպով շարունակ հետեւել Մինասին . . . :

1890 յուլիս 15-ի գում-Գափուի օյցը սարսել էր ամբողջ թիւքը կառավարութեան հիմը։ Նրա աչքին այլ ևս հայը հին ստրուկ հպատակը չէր. նա նշմարել էր նրա ներքին կեանքում մի ինքնաճանաջութիւն, նա տեսնում էր այդ անարդ գերավութինոյ, որ յանդգնում էր

կամաց-կամաց խոյս տալ բնուապետութեան ձնշող ձեռքից։ Նրա համար ո Գեալյուրը՝ նարձել էր մէկ ամենազիսերիմ թշնամի. պէտք էր ուրեմն ոչնչացնել նրան։

Ա. Պօլսի կենտրօնական կառավարութիւնը գաղանի հրաշնադ էր ուղարկել գաւառական վարչութիւններին, որ ամեն կերպ անբարոյական միջոցներ ձեռք առնեն հայ տարրը ոչնչացնելու համար։ Աստիկան զինւորների թիւը բազմապատկել էին։ Կօթի պաշտօնեաները բաց էին արել տուրքի հին տոմարները եւ ամեն կերպով խարդախել էին նրանց, պարտակնա էին հանել գիւղացիներից շատերին, շինել էին ապառիկ տուրքերի երկար ցուցակներ եւ յայնձնել էին ոստիկան զինւորներին. բացարձակ հըրաման էին տվել որ չը խնայեն ոչ ոքին, եւ ամեն մի փոքր տրտունջ գիւղացիների կողմից պէտք է նկատվէր իրը քաղաքական մի շարժում։ Պագըեէի (մնացորդ տուրք) գանձման տագնապը տիրում էր նաև գափու-գաեառում։ Աստիկանապետը վեց ոստիկան զինւորների հետ մտել էր գիւղը եւ ամեն բան տակն ու վըրայ արել։ Սոսկալի էին նրա արարքները։ Ա-

Համօտակայ ծառի Ճիւղերից կախած էին միտղամարդ, որ բոլորովին մերկացրել էին. նաև աղաջում էր, բայց ոչ ոք չէր լսում: Մէկը ուրիշ կողմէ մի քանիսին մէջք-մէջքի կապկպելով գլորել էին աղբի գէզերի վրայ: Գիւղում մնացած տղամարդ, կին, ամենքը խոյս էին տվիել անտառների խորքերը: Տների դռները բաց էին դմել ժանդարմերը, ներս էին խուժել և կողոպտել, աւերել: Գոմեշների, եզների եւ կովերի բաղմութիւն, իրանց վրայ կրելով գիւղոցիների ամբողջ կահ կարասին, սպասում էին բաղաքի ճանապարհի վրայ: Գիւղացիները հեռուից տեսնելով իրանց սպառնացող ապագայի անխուսափելի թշուառութիւնը, կատաղեցան: Նրանք նշմարեցին աւաղակ տուլթանի ստորագաս պաշտօնեաներին, որ կողոպտելով ամբողջ գեղը, հեռանում էին: Նրանք զինվեցան ամեն բանով, ինչ որ ձեռքի տակ ընկաւ եւ կատաղած սկսան դիմել գէպի կիրճը: Ոստիկանները տեսնելով իրանց ետեւից վաղող խուժանին, թողին ամեն ինչ և սկսան փախչել: Նրանք գիւղացիների այդ ընթացքին տվին քաղաքական գոյն: Գափու-Գաեան ապասում էին լուսականակ:

Աշնան լրացած լուսինը իր լեցուն լցոսով թափանցում էր մինչեւ անտառների ամենամութ խորքերը: Մօտակայ ձորակի գլխում լսվում էր փոքրիկ վտակի միօրինակ շփշփոցը, որը վայր էր նետվում ահագին բարձր ժայռերից եւ բնական ցնցուզ էր կազմում: Երեսուն զինված կանոնաւոր զօրքեր ձիավարում էին արագ գէպի զառիվերը: Նրանք փաթաթված էին իրանց զինւորական կապօտներում: Ծովի բամին կծում էր նրանց գէմքերը: Լուսադէմին նրանք հասան Շիրին Ալիի ընկած տեղը: Բին-Բաշին խորը հառաջեց և Մուհամետի անունը տալով նզովեց նրա սպանողին: Նրանք անցան նեղ կիրճից: Գափու-Գաեան ննջում էր իր ամենաբաղը բնով առանց մտածելու, թէ ինչ վտանգ էր սպասում իրան... Անցաւ կարճ ժամանակ: Լուսի լոյսն ար գէն սկսել էր տեղի տալ արշալոյսին: Զինւորները ըստ համարձակվելով թափանցել տները, իրանց համար ընտրել էին մէկ անառիկ պատսպարան եւ սպասում էին որսի.— Գափու-Գաեան պա-

շարվել էր...

* * *

—Պօղոս,—ձայն տվեց մի պառաւ կին, 25
արեկան մի երիտասարդի կողիցը խթելով.—
օղոս, երէկ ասում էիր, թէ էգուց էգուն (ա-
ռաջածը կանուխ) արթնացուր ինձ: Լուսացել է,
ոդի. կալը պիտ էշթօնք (երթանք). . .

Պօղոսը փռվել էր մի կտոր խսիրի վրայ ա-
ռանց հանվելու: Նա բորեց իր կողը, մի քանի
նզ ամ յօրանիցեց, ձմռեց աչքերը եւ Աստու-
րոյ անունը տալով, վեր թռաւ տեղից, առաւ
գատից քարշ ընկած մազը ու հեռացաւ: Նա
մտաւ մարագը, մազը լցրեց յարդով դիմեց դէ-
զի ախոռ՝ իր գոմշուկին կեր տալու: Հազիւ էր
ևա բաց արել դուռը, երբ մի գնդակ յանկարծ
կովեց նրա կոծքի տակ, կողում: Պօղոսն դիա-
քաւալ ընկաւ գետին և այլ եւս վեր չը կացաւ. . .

Զէնքի ձայնը զարթեցրեց գիւղացիներին. նը-
անք սարսափահար գուրս նետվեցան իրանց տը-
երից և քնաթաթախ ցրվեցան մօտակայ ան-
սառների խորքը: Անընդհատ հրացանձգու թիւ-

նը հալածում էր նըանց: Մի քանի ժամ վերջ
ամբողջ գիւղը մերկացած էր, սուլթանի կանո-
նաւոր բաշի բօղուգներն ամբողջապէս թալա-
նել էին նրան և խյս տվել դէպի Զարշամպա:
Բին-Բաշին իր վրէժը լուծել էր:

* * *

Գիւղական մի փայտաշէն տնակի դրան
առջեւ, մերկ տախտակների վրայ, մէկը միւսի
ետեւից կարգով նստոտել էին տղամարդիկնե-
րի մի մեծ բազմութիւն: Նրանք լուռ էին:
Տախտակամածի վրայ փալասի կտորների մէջ
պառկել էր մի տղամարդ, հազիւ 27 տարե-
րեկան. նրա ամբողջ զգեստը կարմիր գոյն էր
առել, իր կողի պատառվածքից նշմարվում էր
արիւնի պաղած փրփուրների տակ մի մեծ բաց-
վածք: Մարթինի գնդակը փշտել էր կողի ոս-
կորներն եւ դուրս ցցել: Տաճկական բոնու-
թիւնն իր ամենավայրագ ոգով պատկերանում
էր այդ լուռ սգաւոր բազմութեան աչքին:
Նրանք երբեմն-երբեմն հառաչում, հեկեկում
էին եւ զգուշութեամբ սրբում իրանց աչքե-

դի դառն արտասուքը: Տեսրութիւնն այլափոխնել էր նրանց գէմբերը. սարսափը եւ բարկութիւնը միախառնվելով՝ պատկերանում էին նրանց իւրաքանչիւրի վրայ: Գամլած նրանք մնացել էին իրանց տեղերում եւ մինչեւ իսկ մի փոքրիկ շարժում անելու զգուշանում էին: Նրանք չէին ուզում փորովել մի յաւիտենական քուն, որով քնած էր Պօզոսը մահվան դրդում: Մինասը նստել էր Պօզոսի գլուխ մօտ. Նրա աչքերը յառված մնացել էին իր հարազատ եղբօր Խոր վէրքի վրայ: Մերժ ընդմերթ նրա հայեացքը կանգնում էր բռնութեան անմեղ զոհի գունատ գէմքի վրայ, որի պաղած արիւնաներկ շըմունքները կարծես աղերսում էին իր հարազատ եղբօրը եւ մրմնջում նրան վրէժ առնել: Մինասը կարծես լսում էր այդ խորհրդաւոր ձայնը գերեզմանի եղերքից եւ սարսուում. Նրա ջիղերը լարվում էին, սիրու կտրատվում եւ արագ բարախում. մէկ ինչ որ ներքին տագնապ տանջում, խեղդում էր նրան. Նա ուզում էր արտասվել, սակայն ծայրայեղ տրտմութիւնը չորացրել էր նրա աչքերի աղբիւրը. նրանում արթնացել էր վրէժ-

թնդրութեան ոգին. . . Եւ այդտեղ այդ դիակի գլխին նա երդվեցաւ իր եղբօր արիւնով՝ դործադրել իր դիտաւորութիւնը: Ապա ոսքի ելաւ եւ սկսաւ հեռանալ, տիսուր, լեցուն սրտով: Մէկ երկու անգամ շրջվեցաւ նայելու իր եղբօր դիակը. երկու աչքեր, լիաբաց ու արիւնացող, կարծես հետեւում էին նրան: Մինասը կանգ առաւ, նա խիստ յուզման մէջ էր: Արիւնոտած աչքերը անակնթարթ դիտում էին նրան՝ պաղ, մարած ու անշարժ մի նայուածքով: Մինասի մարմինը ցնցվեց յանկարծ. . . ապա մի քանի կաթիլ արցունք ծանրը կերպով գլորվեցան նրա այտերի վրայ. . . Դիակի աչքերը շարունակում էին նրան դիտել. . . Յանկարծ նա վեր թռաւ, վազեց դէպի դիակը, համբուրեց նրա բաց ճակատից եւ իր երկու ափի մէջ սեղմելով իր գլուխը, շրջվեցաւ մէկից եւ անհետացաւ. . .

* * *

Անցել էր տասն օր. երեք անձերից բաղկացած ասպատակների մի խումբ աչ ու սար-

սակի էր գցել ջանիկի կառավարութեանոցից
նակ ում: Դա Մինասն էր իր ընկերներուն Ան-
դազքաբրուն

ՎԵՐՁ.

Հակոբի եղանակ

ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL021395

23815